ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/147»

ք. Երևան

«26»«08» 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սիգրաս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Պետրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **կրթական օբյեկտների հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են **պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **30000278** (Երեսուն միլիոն երկու հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.2 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011035251 ՀՎՀՀ 02698732	«Սիգրաս» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Լազո 4/6 ՀՎՀՀ 02244628 «Էվոկաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1660004708890100
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
_____ **Վ. Գասպարյան**	_____ **Հ.Պետրոսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 26 » 08 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/147» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում
(«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգում)

ՀՀ, ք.Էջմիածին, «Վաղարշապատի №2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգում						
Ծավալաթերթ-Նախահաշիվ						
NN	NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6	7
ԲԱԺԻՆ-1						
Ի. Հանդիսությունների դահլիճի համաշինարարական աշխատանքներ						
1. Քանդման աշխատանքներ						
1	18-109 գ=0,8	Ջեռուցման թուջե մարտկոցների ապամոնտաժում, պահպանելով /հետագա տեղադրումով/	սեկց.	58.00	2000	116000
2	14-320	Հին ներկի մաքրում պատերից և առաստաղից	$մ^2$	389.45	1200	467340
3	46-35	Պատերից վնասված գաջե սվաղի քանդում	$մ^2$	65	900	58500
4	46-124	Փայտե դռների և պատուհանների քանդում	$մ^2$	85.185	1600	136296
5	Ռ23-164	Մանրահատակի քանդում	$մ^2$	93.48	300	28044
6	46-119 46-120	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում	$մ^2$	212.86	450	95787
7	Ռ23-77	Շինաղբի մաքրում և դուրս բերում շենքից, կուտակում	տ	126.4	2500	316000
8	Շ310-13 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տ	126.4	3500	442400
		Ընդամենը՝				1660367
		Ընդամենը տոկոսներով				5.53 %
		2. Հատակներ				
1	11-55	Ցեմենտե հարթեցնող շերտ 40մմ հաստությամբ	$մ^2$	212.86	2000	425720
2	11-252	Բեմն ու աստիճանները երեսապատել լամինատե նրբատախտակով / 5մմ հաստությամբ/	$մ^2$	32.23	5000	161150
3	11-252	Բեմի բարփրության հատվածը երեսապատել լամինատե սալով /ոչ պակաս 5մմ հաստությամբ/	$մ^2$	7.25	5000	36250
4	11-252	Լամինատե հատակի պատրաստում շրիշակով և սպունգով /որ պակաս 8մմ հաստությամբ, շրիշակը ոչ պակաս 70մմ բարձրությամբ/	$մ^2$	212.86	5100	1085586
		Ընդամենը՝				1708706
		Ընդամենը տոկոսներով				5.70 %
		3. Դռներ և պատուհաններ				
1	Տեղեկ.	Մետաղապլաստե, 4 խցիկանի, սպիտակ պրոֆիլներից, թափանցիկ ապակեփաթեթով պատուհաններ, ներառյալ սարքերը բացվող մաս	$մ^2$	11.52	32000	368640
2	Տեղեկ.	Նույնը, չբացվող մաս	$մ^2$	46.705	25000	1167625
3	Ե10-102 կիրառ	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից 20սմ լայնությամբ	$մ^2$	3.76	500	1880
4	Շուկա	Պատուհանագոգերի արժեքը	մ	18.80	2000	37600
5	Տեղեկ.	Մետաղապլաստե, խուլ պրոֆիլներից, սպիտակ դռներ, ներառյալ սարքերը	$մ^2$	3.39	40000	135600

6	Տեղեկ.	Վերնափեղկով դուռ մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող մաս	մ^2	14.82	34000	503880
7	Տեղեկ.	վերնափողկ	մ^2	4.06	5000	20300
		Ընդամենը՝				2235525
		Ընդամենը տոկոսներով				7.45 %
		4.Համաշինարարական աշխատանքներ				
1	15-246-1	Պատերի և շեպերի բարելավված սվաղ գաջե շաղախով	մ^2	65.0	2500	162500
2	15-603 15-664	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ	մ^2	326.565	2600	849069
3	15-604 15-665	Առաստաղների ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ	մ^2	62.87	3000	188610
4	34-323 34-353	"Armstrong" կամ համարժեք կախովի առաստաղներ սպիտակ գույնի, հիմնակմախքի պատրաստմամբ	մ^2	180.6	8500	1535100
5	17-144	Ջեռուցման թուջե մարտկոցների լվացում և վերատեղադրում 58 սեկց	կոմպ	7.0	2000	14000
6	15-614	Մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ^2	15.0	1500	22500
7	8-194	Գույքային տախտակամածի տեղադրում և քանդում (H=6.0մ)	մ^2	180.60	3500	632100
		Ընդամենը՝				3403879
		Ընդամենը տոկոսներով				11.35 %
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-1				9008477
		Ընդամենը տոկոսներով՝ ԲԱԺԻՆ-1				30.03 %
		ԲԱԺԻՆ-2				
		II. Սպորտ դահլիճի համաշինարարական աշխատանքներ				
		1. Քանդման աշխատանքներ				
1	46-102	Սպորտդահլիճի փայտե հատակի քանդում, տափագերաններով	մ^2	307.47	800	245976
2	18-109 գ=0,8	Ջեռուցման թուջե մարտկոցների ապամոնտաժում, պահպանելով /հետագա տեղադրումով/	սեկց.	41.00	1000	41000
3	P17-141	Ջեռուցիչների (ռեգիստրների) ապամոնտաժում /հետագա տեղադրումով/	կոմպ	6.0	1000	6000
4	8-599-1 գ=0,4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	10	100	1000
5	14-320	Հին ներկի մաքրում պատերից և առաստաղից	մ^2	1322.07	1200	1586484
6	46-35	Պատերից վնասված գաջե սվաղի քանդում	մ^2	150	900	135000
7	46-124	Փայտե դռների և պատուհանների քանդում	մ^2	115.90	1600	185440
8	46-124	Մետաղական դռների քանդում	մ^2	6.96	2000	13920
9	Ռ9-26	Պատուհանների պաշտպանիչ մետաղական ցանցի /ռաբիցա/ ապամոնտաժում	մ^2	203.40	300	61020
10	Ռ23-164	Մանրահատակի քանդում	մ^2	31.93	100	3193
11	P13-5	Հաղճասալերի քանդում պատերից g/ավազե սվաղի հետ միասին	մ^2	20.23	500	10115
12	46-109	Կերամիկական սալիկներից հատակների քանդում	մ^2	34.74	500	17370
13	46-119 46-120	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում	մ^2	66.67	800	53336
14	Ռ19-74	Թուջե հոսակների ապամոնտաժում	հատ	2	100	200
15	Ռ19-69 Ռ19-5	Լվացարանների հանում ծորակով	հատ	2	1000	2000
16	17-71 գ=0,6	Ասիական զուգարանակոնքերի քանդում	հատ	2	3000	6000
17	P19-1	d=15-32 մմ մետաղական խողովակաշարի ապամոնտաժում	մ	15	500	7500
18	Ռ23-77	Շինաղբի մաքրում և դուրս բերում շենքից, կուտակում	տ	126.4	2500	316000
19	C310-13 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և	տ	126.4	3500	442400

		տեղափոխում 13կմ				
		Ընդամենը՝				3133954
		Ընդամենը տոկոսներով				10.45 %
		2. Հատակներ				
1	11-184 11-63	Փայտե չորսուներից 60մմ հաստությամբ հատակների տափագերանների տեղադրմամբ, շրիշակների հետ միասին	մ^2	307.47	13000	3997110
2	6-38	Նոր փայտե հատակների հղկում	մ^2	307.47	1500	461205
3	14-358	2 շերտ յուղաներկում, սպորտային գծանշումով	մ^2	307.47	2000	614940
4	11-55	Ցեմենտե հարթեցնող շերտ 40մմ հաստությամբ	մ^2	62.665	2000	125330
5	11-252	Շրիշակների տեղադրում պրեսգրանիտից 10 սմ բարձրությամբ (60.7 մ)	մ^2	6.07	8000	48560
6	11-218	Հատակների երեսպատում կերամիկական սալիկներով չսահող	մ^2	12.60	12000	151200
7	11-218	Հատակների երեսպատում պրեսգրանիտե սալիկներով չսահող	մ^2	50.065	12000	600780
		Ընդամենը՝				5999125
		Ընդամենը տոկոսներով				20 %
		3. Դռներ և պատուհաններ				
1	Տեղեկ.	Մետաղապլաստե, 4 խցիկանի, սպիտակ պրոֆիլներից, թափանցիկ ապակեփաթեթով պատուհաններ, ներառյալ սարքերը բացվող մաս	մ^2	7.14	32000	228480
2	Տեղեկ.	Նույնը, չբացվող մաս	մ^2	87.4	30000	2622000
3	E10-102 կիրառ	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից 40սմ լայնությամբ	մ^2	0.94	500	470
4	Շուկա	Պատուհանագոգերի արժեքը	մ	2.35	2000	4700
5	Շուկա (կիրառ.)	Մարզադահլիճի պատուհանների ցանցա պատում սինթեթիկ թելից գործած ցանցով	մ^2	69.95	8000	559600
6	Շուկա	Ցանցի ձգում պողպատե ճոպանով	մ^2	69.95	3000	209850
7	Տեղեկ.	Մետաղապլաստե, խուլ պրոֆիլներից, սպիտակ դռներ, ներառյալ սարքերը	մ^2	10.50	38000	399000
8	Տեղեկ.	Վերնափեղկով դուռ մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող	մ^2	3.20	45000	144000
9	Տեղեկ.	վերնափողկ	մ^2	0.72	5000	3600
10	Շուկա	Մետաղական դռան տեղադրում	մ^2	2.92	40000	116800
		Ընդամենը՝				4288500
		Ընդամենը տոկոսներով				14.29 %
		4.Համաշինարարական աշխատանքներ				
1	15-246-1	Պատերի և շեպերի բարելավված սվաղ գաջե շաղախով	մ^2	166.10	2500	415250
2	15-264	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտավազե շաղախով, մետաղական ցանցով	մ^2	99.30	2000	198600
3	15-603 15-664	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ	մ^2	783.24	1800	1409832
4	15-604 15-665	Առաստաղների ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ	մ^2	538.83	3000	1616490
5	E8-163	Կանոնավոր քարով արտաքին պատերի շարվածք /պատուհանի բացվածքի փակում/ 16.1 մ^2	մ^3	3.22	15000	48300
6	15-92	Պատերի երեսպատում հախճասալիկով	մ^2	83.20	12000	998400
7	34-323 34-350	Կախովի առաստաղ սանհանգույցներում պլաստմասսայե շերտապրոֆիլներից, հիմնակմախքի պատրաստմամբ /նաև առաջին հարկի ապամոնտաժված հատվածում/	մ^2	12.60	7000	88200
8	17-144	Ջեռուցման թուջե մարտկոցների լվացում և վերատեղադրում 41 սեկց	կոմպ	5.0	2000	10000
9	P17-144	Ջեռուցման մարտկոցների լվացում և վերատեղադրում /ռեգիստր/	կոմպ	6.0	2000	12000
10	15-614	Մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ^2	40.0	2000	80000

11	8-194	Գույքային տախտակամածի տեղադրում և քանդում (H=6.0մ)	մ^2	291.50	1500	437250
		Ընդամենը՝				5314322
		Ընդամենը տոկոսներով				17.71 %
		5. Ներքին ջրամատակարարման ցանց				
1	16-261	Մետաղապլաստե խողովակների մոնտաժում Φ16x2մմ, ձևավոր մասերի տեղադրմամբ և փորձարկմամբ	մ	15.0	800	12000
2	E17-28	Լվացարանի տեղադրում	կետ	2.0	20000	40000
3	E17-53	Լվացարանի ծորակի տեղադրում	հատ	2.0	5000	10000
4	E17-96	Ջրատաքացուցիչի տեղադրում <<Արիստոն>> N=1,5կվտ/ժ	հատ	2.0	120000	240000
5	E17-53	Ծորակ-խառնիչի տեղադրում	հատ	2.0	10000	20000
6	E17-61	Ասիական զուգարանակոնքի տեղադրում	կետ	2.0	35000	70000
7	E17-36	Հոսակի տեղադրում Φ50մմ	հատ	2.0	3000	6000
8	Տեղեկ.	Փական ջրի Φ15մմ	հատ	6	3000	18000
9	Տեղեկ.	Նույնը, Φ32մմ	հատ	1	3500	3500
10	16-211	Միացում գործող ջրագծին Φ32մմ	տեղ	1	5000	5000
11	Տեղեկ.	Ծորակի տեղադրում	հատ	2	5000	10000
		Ընդամենը՝				**434500**
		Ընդամենը տոկոսներով				1.45%
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-2				**19170401**
		Ընդամենը տոկոսներով՝ ԲԱԺԻՆ-2				63.9 %
		ԲԱԺԻՆ-3				
		III. Հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի էլ. մոնտաժային աշխատանքներ				
		1. Հանդիսությունների դահլիճ				
1	Շուկա	Պլաստմասե արկղ 9 տեղանոց	հատ	1	50000	50000
2	8-525-2	Ավտոմատ անջատիչ միաֆազ40Ա	հատ	1	24000	24000
3	8-525-1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 20Ա	հատ	4	18000	72000
4	8-591-2	Միաբեռ անջատիչ միատեղ փակ հաղորդալարի համար	հատ	4	5000	20000
5	8-591-10	Նույնը երկատեղ	հատ	2	6000	12000
6	8-591-8	Միաբևեռ երկտեղանոց վարդակ հողանցման հպակով՝ պատի մեջ տեղադրվող 40Ա	հատ	3	6000	18000
7	8-409-1	Հաղորդալար կկթ -2x2,5մմ^2	մ	150	1500	225000
8	8-409-1	Հաղորդալար կկթ -2x4մմ^2	մ	40	2000	80000
9	Շուկա	Տուփ ճյուղավորման	հատ	4	3000	12000
10	Շուկա	Տուփ անջատիչների և վարդակների համար	հատ	6	600	3600
11	8-417-1	ՊՎՔ խողովակ 20մմ արտաքին տրամագծով	մ	190	1100	209000
12	8-603-1	Լեդ լուսատու 1195x180x50մմ, 3950K, 4600LM, 36watt	հատ	33	15000	495000
13	8-603-1	Լեդ լուսատու Ø183մմ, 4000K, 3500LM, 35watt	հատ	2	15000	30000
14	46-57	Ակոսների բացում	մ	190.0	800	152000
15	15-246-1	Նույնի սվաղում գաջի շաղախով	մ^2	19.0	2500	47500
		Ընդամենը՝				**1450100**
		Ընդամենը տոկոսներով				**4.83%**
		2. Սպորտ դահլիճ				
1	8-591-2	Միաբեռ անջատիչ միատեղ փակ հաղորդալարի համար	հատ	11	6300	69300
2	8-591-8	Միաբևեռ երկտեղանոց վարդակ հողանցման հպակով՝ պատի մեջ տեղադրվող 40Ա	հատ	2	6000	12000
3	8-599-1	Լուսակալ (փոշի և ջուր չթափանցող) էներգախնայող լյումինեսցենտային լամպերով 2x18վտ հզորությամբ	հատ	4	20000	80000
4	8-603-1	Լուսարձակիչ ԼԵԴ 500 վտ պաշտպանիչ ցանցով	հատ	4	20000	80000
5	8-603-1	Լեդ լուսատու 1195x180x50մմ, 3950K, 4600LM, 36watt	հատ	5	20000	100000
6	8-603-1	Լեդ լուսատու Ø183մմ, 4000K, 3500LM, 35watt	հատ	2	15000	30000
		Ընդամենը՝				371300
		Ընդամենը տոկոսներով				1.24 %

		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-3				1821400
		Ընդամենը տոկոսներով՝ ԲԱԺԻՆ-3				6.07 %
		Ընդամենը				30000278
		Ընդամենը տոկոսներով				100 %

*** Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մաշտոցի 72/2 հասցեում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հ.Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
«26» 08 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/147» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում

«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգում

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
	ԲԱԺԻՆ-1		
	Ի. Հանդիսությունների դահլիճի համաշինարարական աշխատանքներ		
1	Քանդման աշխատանքներ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
2	Հատակներ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
3	Դռներ և պատուհաններ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
4	Համաշինարարական աշխատանքներ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
	ԲԱԺԻՆ-2		
	Սպորտ դահլիճի համաշինարարական աշխատանքներ		
1	Քանդման աշխատանքներ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
2	Հատակներ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
3	Դռներ և պատուհաններ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
4	Համաշինարարական աշխատանքներ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
5	Ներքին ջրամատակարարման ցանց	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
	ԲԱԺԻՆ-3		
	Հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի էլ. Մոնտաժային աշխատանքներ		
1	Հանդիսությունների դահլիճ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ
2	Սպորտ դահլիճ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

			90 - րդ օրացուցային օրը ներառյալ
	Ընդամենը 2020 թ. կատարվող աշխատանքներ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 - րդ օրացուցային օրը ներառյալ

*** Նախատեսվում է գնել 2020 թ. Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից, բայց ոչ ավելի ուշ քան ս.թ դեկտեմբերի 1-ը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հ.Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 3
«26» 08 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՆԳՀԱՇՁԲ-20/147» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին, պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611100/60	**Կրթական օբյեկտների հիմնանորոգում** («Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգում)								30000278	30000278	30000278	30000278	30000278	30000278

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հ.Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
«26» 08 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/147» ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ և ԱՅԼՆ) և ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ և (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում

«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգում

«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան **2 (երկու) տարվա երաշխիքային ժամկետ:**

«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների երաշխիքային ժամկետներին **պահանջներ չեն ներկայացվում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հ. Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

evocaBANK

Հավելված 4

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-20/147» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N 4787/21

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «**ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-20/147**» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Սիգրաս» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «**ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-20/147**» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«Էվոկաբանկ» ՓԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **30,000,278.00 (երեսուն միլիոն երկու հարյուր յոթանասունութ)** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N «**ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-20/147**» ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 30.01.2021թ. ներառյալ:

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

N° 4787/21 1660133835

Date 24/08/2020

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N "ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-20/147" ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Էմմա Ջանինյան

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 65 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

N 9787/21 N60133835

Date 24/08/2020

evocabank

Հավելված 5

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/147» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N 4789/21

(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«Սիգրաս» ՍՊԸ** (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N «**ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/147**» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«Էվոկաբանկ» ՓԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **3,000,027.80 ՀՀ դրամ (երեք միլիոն քսանյոթ դրամ ութսուն լումա)** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N «**ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/147**» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 30.01.2021թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «**ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/147**» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 4789/21 1660133837

Date 26/08/2020

evocaBANK

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Էմմա Ջանինյան

Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 4789/21 7660133837

Date 24/08/2020